ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*20 ապրիլի 2022թվականի N 281*

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

*1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.*
*1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,*
*2) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 2 /երկու/ հատ,*
*3) հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝ 1 /մեկ/ հատ,*
*4) սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի՝ կարաոկեի գործունեության իրականացման՝ 1 / մեկ/ հատ,*
*5) արտաքին գովազդ տեղադրելու՝ 1 /մեկ/ հատ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*20 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. ապրիլի 20-ի
N 281 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Եղյազարյա Մխիթարյան | ք. Աբովյան, Երիտասարդական փողոց, շենք 13,բնակարան 3 | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Բաղրամյան 5-րդ փողոց, 1-ին նրբանցք, N 2 խանութ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի ապրիլի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը |
| 2. | ԱՁ Մարո Մարգարյան | Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, տուն 19 | ք. Հրազդան, Սպանդարյան փողոց, տուն 76 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի ապրիլի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը |
| 3. | ԱՁ Մարո Մարգարյան | Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, տուն 19 | ք. Հրազդան, Սպանդարյան փողոց, տուն 76 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի ապրիլի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը |
| 4. | ԱՁ Ալվինա Գևորգյան | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 149 | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 149 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի ապրիլի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը |
| 5. | ԱՁ Ալվինա Գևորգյան | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 149 | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 149 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի ապրիլի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը |
| 6. | ԱՁ Սիլվա Վարդանյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 204, բնակարան 25 | ք. Հրազդան, Կենտրոն ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս,Խնկոյան 18 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի ապրիլի 01-ից մինչև 2022 թվականի հունիսի 30-ը |
| 7. | ԱՁ Նելլի Մեսրոպյան | Արմավիրի մարզ, գ Փարաքար, Երևանյան փողոց, 2-րդ նրբանցք, տուն 9 | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զ.Անդրանիկի պողոտա 94 | արտաքին գովազդ տեղադրելու | 1 քառ/մ | 2022 թվականի ապրիլ ամսվա համար |
| 8. | ԱՁ Արտուշ Բաղդասարյան | Արմավիրի մարզ,ք. Մեծամոր, 1 թաղամաս, շենք 38, բնակարան 21 | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 10-րդ փողոց, 6-րդ նրբանցք, թիվ 17/1 ավտոտարհման օբյեկտ | սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի՝ կարաոկեի գործունեության իրականացում | հիմնական շինություն | մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ՝ տարվա համար |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 ապրիլի 2022թվականի N 282*

## *ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Ռուզան Ավագյանի 2022 թվականի մարտի 17-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 17 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Ռուզան Սերյոժայի Ավագյանին պատկանող Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 12/4 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11062021-07-0170, ծածկագիր XMWUSVEHC898) և 12/5 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24032022-07-0029, ծածկագիր AA14MI7ADRTB) հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 14-րդ փողոց 12/4:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*21 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*21 ապրիլի 2022թվականի N 283*

## *ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 ապրիլի 2022թվականի N 284*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վարդիթեր Թորոսյանի լիազորված անձ Վաղարշակ Պողոսյանի 2022 թվականի ապրիլի 22-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Դրաֆ Թորոսյանին (ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական ԱԲ120327, տրված՝ 2014 թվականի նոյեմբերի 26-ին) սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1120539, տրված՝ 2005 թվականի հունվարի 25-ին) Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս, Հ. Աճառյան փողոց 33:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*՝** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 ապրիլի 2022թվականի N 285*

### *ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՆԿՈՒՂԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջի, հիմք ընդունելով 2022 թվականի փետրվարի 04-ին <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱԶ Հարություն Բեյլույանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022T1AVJ2 ծածկագիրը և Ռոբերտ Փաշիկյանի 2022 թվականի հունվարի 26-ի դիմումը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Օրինական ճանաչել Երևան քաղաքի Նոր Արեշ 38-րդ փողոցի թիվ 24/1 տան բնակիչ Ռոբերտ Սամսոնի Փաշիկյանի կողմից Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 10-րդ փողոցի 11-րդ նրբանցք 2 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքը գրանցման վկայական N 2556770, տրված՝ 2008 թվականի հունիսի 03-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 103.72քմ արտաքին մակերեսով նկուղը՝ օրինականացման վճարը սահմանել 147 500 (մեկ հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր) դրամ, և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*
*2.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*
*3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:*

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 ապրիլի 2022թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*22 ապրիլի 2022թվականի N 286*

*ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով 2022 թվականի մարտի 16-ին <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022LD1XJI ծածկագիրը և Դավիթ Դավթյանի 2022 թվականի մարտի 15-ի դիմումը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 8-րդ փողոցի թիվ 20 տան բնակիչ Դավիթ Իգնատի, Մելանյա Ռազմիկի Դավթյանների, Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 9-րդ շենքի թիվ 13 բնակարանի բնակչուհի Մարինե Դավթի Դավթյանի և Միկրոշրջան թաղամասի 57-րդ շենքի թիվ 28 բնակարանի բնակչուհի Մանուշակ Դավթի Դավթյանի կողմից Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 8-րդ փողոց 20 հասցեում գտնվող, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 1791416, տրված՝ 2003 թվականի հոկտեմբերի 31-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած 59.65քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ օրինականացման վճարը սահմանել 85 000 (ութսունհինգ հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*

*2. Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ*

պահանջելու իրավունք:
3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

22 ապրիլի 2022թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*22 ապրիլի 2022թվականի N 287*

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանը.*

### *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր պաշտոնների առաջին ենթախմբի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի մայիսի 25-ին ժամը $15^{00}$-ին հայտարարել մրցույթ՝ համաձայն հավելված N1-ի:*

*2.Հաստատել մրցույթի հայտարարությունը՝ համաձայն հավելված N2-ի:*

*3.Աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել հայտարարության հրապարակումը:*

*4. Մրցույթի նախապատրաստական աշխատանքների կատարումը վերապահել Հրազդան համայնքի ղեկավարի օգնական Աղրիանա Գալստյանին:*

*5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված N 1
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի ապրիլի 22-ի
N 287 որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՆԹԱԽՄԲԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

| ՀՀ | Ստորաբաժանման անվանումը | Համայնքային ծառայության պաշտոնի | |
|---|---|---|---|
| | | անվանումը | Անձնագրի ծածկագիրը |
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Աշխատակազմ | Աշխատակազմի քարտուղար | 1.-1-1 |

Հավելված 2
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի ապրիլի 22-ի
N 287 որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

**1. Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր՝ 1.1-1 /:**

*Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.*

ա) ապահովում է աշխատակազմում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

բ) մասնակցում է աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին.

գ) ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը.

դ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և այդ պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

ե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների մասին մրցութային հանձնաժողովի եզրակացությունը, իսկ այդ արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշումը ստանալուց հետո, աշխատանքային երեք օրվա ընթացքում, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է տվյալ պաշտոնում.

զ) հաստատում է աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները.

է) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաև առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները.

ը) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը.

թ) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաև ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշման հիման վրա օրենքով սահմանված ժամկետում ընդունում է տվյալ համայնքային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում.

ժ) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի ու Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ.

ժա) իր կողմից համայնքային ծառայության դասային աստիճան շնորհած աշխատակազմի համայնքային ծառայողին օրենքով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատելու հետ միաժամանակ իր հրամանով զրկում է նաև տվյալ դասային աստիճանից.

ժբ) օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակումներ է կատարում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններում.

ժգ) համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր հայեցողությամբ որոշում է աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոնները փոխարինող համայնքային ծառայողների կողմից զբաղեցնելու հարցը.

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է ժամկետային աշխատանքային պայմանագրեր.

ժե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ և կարգապահական տույժեր.

ժզ) աշխատակազմի համայնքային ծառայողի 65 տարին լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն այդ համայնքային ծառայողի պաշտոն զբաղեցնելը մինչև մեկ տարի ժամկետով շարունակելու թույլտվության մասին.

ժէ) կազմակերպում է աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները.

ժը) համայնքի ղեկավարին է զեկուցում ամենօրյա փոստը և թղթակցությունները.

ժթ) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում նրա որոշումները և կարգադրությունները.

ի) աշխատակազմում կազմակերպում է տեխնիկական սպասարկման աշխատանքները.

իա) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ համայնքապետարանների աշխատակազմերի հետ.

իբ) համայնքի ղեկավարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

իգ) իր անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ.

իդ) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.

իե) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.

իզ) կազմակերպում և ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը.

իէ)կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

իը) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը.

իթ) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

լ) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.

լա) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.

լբ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

լգ) անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

լդ/ օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների ցուցակների վերաբերյալ, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները՝ տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար:

լե/ օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչին, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.

լզ/ իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում համայնքի ղեկավարին անհապաղ ներկայացնում է առաջարկություն՝ տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկատվություններ տրամադրելու համար.

լէ/ իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացմանը:

լը/ իրականացնում է գաղտնի փաստաթղթերի մշակման, գաղտնի գործավարության վարման և գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքներ:

Աշխատակազմի քարտուղարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է

այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

***Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝***

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

բ) ՀՀ Սահմանադրության «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Զինապարտության մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի:

**Մրցույթը կկայանա 2022 թվականի մայիսի 25-ին ժամը 15:00-ին Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքում /ք.Հրազդան/:**

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար դիմող քաղաքացիները /փախստականի կարգավիճակ ունեցող անձինք/ պետք է ներկայացնեն՝**

**-դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,**

**-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,**

**-արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի, կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,**

**-1 լուսանկար՝ 3x4 սմ. չափսի,**

**-անձնագրի պատճենը:**

**Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:**

**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, Հրազդանի համայնքապետարանում (ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, վարչական շենք, 5-րդ հարկ, աշխատակազմ , հեռ. /060/ 70-40-60 ) և ՀՀ Կոտայքի մարզպետարանում (ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ, վարչական շենք, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն, հեռ. /0223/ 2-34-13, 2-73-01):**

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2022թ. մայիսի 10-ը ներառյալ:**

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 ապրիլի 2022թվականի N 288*

## *ՋԵՐՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով ԱՁ Հակոբ Մարգարյանի կողմից տրամադրված հատակագծերը և «ՀրազՋԷԿ» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Ս.Կարայանի 2022 թվականի ապրիլի 18-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.«Հրազդանի էներգետիկ կազմակերպություն» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2636360, տրված՝ 2009 թվականի հուլիսի 17-ին/ Հրազդան քաղաքի Գործարանային 1 հասցեում գտնվող ջերմային էլեկտրակայանի 8.31309հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Գործարանային փողոց 1/13, 185.67151հա մակերեսով մասինը՝ թողնելով նույնը՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Գործարանային փողոց 1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*22 ապրիլի 2022թվականի N 289*

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Նունե Սահակյանի 2022 թվականի ապրիլի 18-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 10 տան բնակիչ Նունե Սահակյանին ժառանգության իրավունքով փոխանցված /22 Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի ապրիլի 18-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 1185-ով, ժառանգական գործ 78/ Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս թիվ 10ք հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 10/2 հասցեով:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 ապրիլի 2022թվականի N 290*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Վարդան Ենոքյանի 2022 թվականի ապրիլի 19-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

*1.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 10 փողոցի 3 նրբանցքի թիվ 4 տան բնակիչ Վարդան Ենոքյանին պատկանող (Ժողովրդական պատգամավորների Հրազդանի Շրջխորհրդի գործկոմի 1995 թ.-ի հունվարի 11-ի որոշում, Արձ. թիվ 1, 22 Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի գյուղի վարչական ղեկավարի կողմից 13.04.2022թ.տրված տեղեկանքը) Կոտայքի մարզի գյուղ Քաղսի հասցեում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 11-րդ փողոց 29:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 ապրիլի 2022թվականի N 291*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Արսեն Հակոբյանի 2022 թվականի ապրիլի 18-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Ռազմիկ Հակոբյանին (ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական ԲԱ467059, տրված՝ 2021 թվականի հոկտեմբերի 15-ին) սեփականության իրավունքով պատկանող(սեփականության իրավունքի գրանցման վկայական1998087, տրված՝ 2006 թվականի փետրվարի 1-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 362:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*22 ապրիլի 2022թվականի N 292*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հայկուհի Մելքոնյանի 2022 թվականի ապրիլի 18-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 3 փողոցի թիվ 5 տան բնակիչ Հայկուհի Մելքոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1479524, տրված՝ 2003 թվականի հոկտեմբերի 31-ին) Կոտայքի մարզի գյուղ Քաղսի հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 4-րդ թաղամաս 99:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*22 ապրիլի 2022թվականի N 293*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՆԿՈՒՂԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով,2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգովն հիմք ընդունելով Գրիգոր Արտաշի Ստեփանյանի 2022 թվականի ապրիլի 19-ի դիմումը, <<Հայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Կոտայքի Մարզային Մասնաճյուղի կողմից տրված արխիվային քաղվածքը՝ Հայկական ԽՍՀ Ժողովրդական դեպուտատների Հրազդանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1988 թվականի հուլիսի 28-ի նիստի թիվ 11 արձանագրության 20/18-րդ կետից,համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը,չափագրման տվյալների մուտքագրման 2022RKP6KSծածկագիրը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1. Գրիգոր Արտաշի Ստեփանյանին պատկանող Հրազդան քաղաքի,Հարավային թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս,Միհաս Ավետիսյան փողոց 33:*
*2.Օրինական ճանաչել Գրիգոր Արտաշի Ստեփանյանին պատկանող Հրազդան քաղաքի Միհաս Ավետիսյան փողոց 33հասցեում գտնվող 600.0 քմ հողամասում բնակելի տան ինքնակամ կառուցած 41.97 քմ արտաքին մակերեսով նկուղը, ինքնակամ կառուցած 138.83 քմ արտաքին մակերեսով առաջին հարկը, ինքնակամ կառուցած 138.83 քմ արտաքին մակերեսով երկրորդ հարկը, ինքնակամ կառուցած 38.45 քմ մակերեսով բաց պատշգամբը, ինքնակամ կառուցած 37.53 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը և ինքնակամ կառուցած 7.34 քմ մակերեսով պարիսպը:*
*3.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և*

*Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:*

*4.Բնակելի տան ինքնակամ կառուցած նկուղը, ինքնակամ կառուցած առաջին հարկը, ինքնակամ կառուցած երկրորդ հարկը, ինքնակամ կառուցած բաց պատշգամբը, ինքնակամ կառուցածտնտեսական շինությունը և ինքնակամ կառուցած պարիսպը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:*

*5.Բնակելի տան ինքնակամ կառուցած նկուղը, ինքնակամ կառուցած առաջին հարկը, ինքնակամ կառուցած երկրորդ հարկը, ինքնակամ կառուցած բաց պատշգամբը, ինքնակամ կառուցած տնտեսական շինությունը և ինքնակամ կառուցած պարիսպի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:*

*7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*22 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 ապրիլի 2022թվականի N 294*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Վանատուր թաղամասում գտնվող 54.2քմ մակերեսով 07-001-0326-0042 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 427/2:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*25 ապրիլի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*25 ապրիլի 2022թվականի N 295*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

